

Փոստմարզպետ Մուշեղ Աբգարյանի ելույթը Արտենիի խմելու ջրագծի բացման ժամանակ

Հարգելի ներկաներ, սիրով փոխանցում եմ մարզպետ Սարգիս Սահակյանի շնորհավորանքը Արտենի համայնքի բնակիչներին և շնորհակալություն հայտնեց «Մաքուր էներգիա և ջուր» ծրագրին՝ համայնքում 6,5 կմ երկարությամբ ջրագիծ կառուցելու համար:

Ծրագիրն իրականացվել է մարզպետարանի, ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության «Մաքուր էներգիա և ջուր» ծրագրի և համայնքի համատեղ ուժերով:

Ջրամատակարարման ցանցի բարելավման շնորհիվ բոլոր տնային տնտեսություններն այժմ ունեն օրական մինչև հինգ ժամ ջրամատակարարում: Ջրամատակարարման ցանցի բարելավման հետ մեկտեղ, բոլոր տնային տնտեսություններում ջրաչափեր տեղադրելով, բարելավվել է նաև սպառվող ջրաքանակի հաշվառման գործընթացը՝ հնարավորություն տալով ճշգրիտ հաշվառել բնակիչների կողմից փաստացի օգտագործվող ջրաքանակը:

Հին ցանցի փոխարինման շնորհիվ նշանակալիորեն լավացել է թե ջրի որակը, թե ճնշումը, և մինչև հիմա համակարգի ոչ մի էական թերություն կամ վթար չի արձանագրվել: Գյուղատնտեսության զարգացման միջազգային հիմնադրամի աջակցությամբ մոտ ապագայում նախատեսվում է ավելացնել ջրամատակարարման ժամերը. տեղադրվելու է ջրի նոր, ավելի արդյունավետ պոմպ, որը շուրջօրյա ջրամատակարարման հնարավորություն կտա: